րել նորին քաղաքին սրբոյ, որպէս խոստացաք յառաջադոյն, դնեմք արդ պարագմանութիւն նորին ՚ի կարգի պատմութեանս, որ ունի օրինակ զայս։

Ես յաղթողս Սալահատտինն՝ որդի էյուպայ՝ որդւոյ Շատիայ՝ իրաւամբ յաղթականութեան իմոյ՝ եւս զգիրս զայս։

Գոհանամ զԱստուծոյ՝ որ ՚ի ձեռն նուաստ ծառայիս իւրոյ շնորհեաց զտիրապետութիւնն Ս. երկրին և սրբեաց զտաճար իւր ՚ի կռոց և ՚ի պատկերաց։ Օրհնութիւն և գովութիւն ՚ի վերայ այնորիկ, որ առաքեաց զողորմութիւն մարդկանց։ ..... Եւ յետ այսորիկ հարկ եղեւ գրել Մէլիք Սալահատտինի, խաղաղարարին օրինաց և աշխարհի, թագաւորին մեծի, և լուսապայծառ անձին, Սալահատտին Սուլթանին։ Պահեսցէ Տէր Աստուած զպանծալի թագաւորութիւն նորին ՚ի ժամանակս բազումս, և պարգեւեսցէ նմա զրարիս աստ և ՚ի հանդերձեալն։

Յորժամ ընթերցաւ և ՚ի միտ էառ՝ զոր ինչ գրեալ էր Մարգարէն Աստուծոյ, որոյ բանիցն զկետ երթեալ էին Մեծն Օմար՝ որդի Խաթթապայ, և Մեծն Ալի՝ որդի Ապի Թալիպայ։ Համեցաւ նա ինքն եւս հետեւիլ գրոց և յիշատակաց նոցին, որք միանգամ դաշինս եդեալ էին ընդ ազգին Հայոց, կրօնակից եւ հետեւող ազգի նոցին, որք են, Հապէշք, Գոպտիք և Ասորիք։

Եւ ըստ օրինակի և աւանդութեան նոցին՝ գրեցի և ես առ ընդհանուր ազգն Հայոց, որք աւանդեալ են մեզ յԱստուծոյ, յարեւելից մինչեւ յարեւմուտս, խնամոնոց եւ ազէտ ռամկաց, հեռաւորաց եւ մերձաւորաց, ծանօթից և անծանօթից։ զայս հաստատուն դաշինս և զհնչակաւոր վճիռս։ Եւ կտակաւ աւանդեմ զկնի յաջորդաց իմոց, որք յետեալ են յօրէնս Իսլամութեան։ պահել զիրաւունս և առնել զարդարութիւն։ անթերի եւ ճշմարտութեամբ ՚ի կիր առնուլ զիմաստս գրոյս։

Զի եթէ ոք յիսլամաց՝ հակառակութեամբ լուծանէ և կամ այլայլէ զդաշինս, որպէս հրամայեալ է Մարգարէն, և հաւատարիմ բարեկամք և հետեւողք նորին։ յայնժամ լուծանի զսխան Աստուծոյ, եւ եղծանի զդաշինս, և արհամարհէ զպարտիս նորին։ թէ թագաւոր իցէ՝ եւ